Ծրագիր՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման /ՏՏԵԶ/

ԱՄՄ No՝ TUR-13.1/TUR-13.4

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի փողոցների վերակառուցում (2 Լոտ)

Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ 1

Ի պատասխան № **TUR-13.1/TUR-13.4 «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի փողոցների վերակառուցում (2 Լոտ)»** շինարարական աշխատանքների գնման մրցույթի վերաբերյալ 2023թ. հունվարի 9-ին և 10-ին էլ.փոստով ստացված հարցումներին ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

Հարց 1՝ «TUR-13.1/TUR-13.4 Լոտ 1՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան և Չայկովսկու փողոցների վերականգնում, Լոտ 2՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի վերականգնում և TUR-15 Մարմաշենի վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում մրցույթների սարքավորումների մեջ՝ TUR-13.1/TUR-13.4-ում կա պահանջվող ավտոամբարձիչ իսկ TUR-15-ում՝ ավտոկռունկ: Խնդրում ենք հստակեցնել այս 2 մեխանիզմի տարբերությունները և ավտոամբարձիչի բնութագիրը:»

Պատասխան՝

Ավտոկռունկն ինքնաշարժ սլաքավոր կռունկ է, կարող է գրունտային ճանապարհներով տեղաշարժվել բեռով կամ առանց բեռան, հաղթահարել մինչև 20° թեքությամբ բարձունքներ: Ավտոկռունկներն օգտագործվում են շինմոնտաժային, բարձման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ:

Ավտոամբարձիչը ավտոմոբիլի կմախքի վրա տեղակայված ամբարձիչ մեքենա է /самодвижущаяся машина для погрузки, разгрузки и перевозки грузов/.

Հարց 2՝ «TUR-13.1/TUR-13.4 Լոտ 1՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան և Չայկովսկու փողոցների վերականգնում, Լոտ 2՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի վերականգնում և TUR-15 Մարմաշենի վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում մրցույթների հրավերում կա պահանջվող 3 (երեք) տարիների (2020-2022թթ.) ֆինանսական հաշվետվություն, սակայն 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունների վերջնաժամկետը 2023թվականի ապրիլի 20-ն է, ուստի այժմ ժամանակի առումով հնարավոր չէ ներկայացնել 2022թվականի ֆինանսական հաշվետվությունը:»

Պատասխան՝

Սույն մրցույթի շրջանակներում ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետ չի սահմանվում /փաստաթղթերի ներկայացման ժամկետները և կարգը նշված են մրցութային փաստաթղթում/: Ուստի, անհրաժեշտ է ներկայացնել սույն մրցութային փաստաթղթի «Ֆինանսական վիճակ և կատարողական» Ձևաթուղթ FIN–3.1., «Ֆինանսական փաստաթղթեր» կետ 2.-ի պայմաններին բավարարող ֆինանսական հաշվետվությունները:

ՀՏԶՀ գնումների բաժին
12 հունվարի 2023թ.